

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄՐՑԱԿՑԱՅԻՆ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ**

<https://doi.org/10.59982/18294359-24.2-hn-06>

Նաիրի Արծրունի Սարգսյան

ի.գ.թ., դոկտորանտ

ՀՀ ԳԱԱ, Տնտեսագիտության ինստիտուտ

nsargsyan@auditors.am

Անփոփագիր

Հոդվածի հիմնական նպատակն է՝ վերլուծել տնտեսության մրցակցային առավելությունների բացահայտման հնարավորությունները, ներկայացնել դրանց տեսական և մեթոդաբանական հիմքերը: Ժամանակակից պայմաններում և դինամիկ զարգացող աշխարհում մրցակցային առավելությունների խթանման գործում պետությանը չափազանց կարևոր դերակատարում է վերապահված: Ընդ որում, պետությունը չի կարող և չպետք է փորձի ստեղծել տնտեսության մրցունակ ճյուղեր, քանի որ այդ քայլերը պետք է կատարեն միայն ընկերությունները: Պետությունը պետք է ընկերություններին խթանի, ինչ-որ իրավիճակներում՝ նույնիսկ ստիպի ընդլայնել իրենց ձգտումները, հետաքրքրությունների շրջանակը և անցում կատարել մրցունակության ավելի բարձր մակարդակների, նույնիսկ եթե այդ գործընթացը լինի տհաճ և բարդ: Ուստի՝ պետությունը պետք է ձևավորի այնպիսի միջավայր, որում ընկերությունները կարող են ստեղծել և զարգացնել մրցակցային առավելություններ: Ազգային տնտեսության մրցունակության խթանմանը, ընկերությունների մրցակցային առավելությունների զարգացմանն ուղղված պետության արդյունավետ ռազմավարությունը, ըստ էության, պետք է հիմնվի այնպիսի պարզագույն սկզբունքների վրա, ինչպիսիք են՝ փոփոխությունների խրախուսումը, երկրի ներսում մրցակցության պաշտպանությունն ու զարգացումը, նորարարականության խթանումը: Մրցակցային առավելությունները կարող են տարբեր ձևեր ընդունել՝ կախված ճյուղի, ապրանքի և շուկայի առանձնահատկություններից: Ընկերության մրցունակության հիմքում ընկած է ոչ միայն առանձին վերցրած մրցակցային առավելությունը կամ դրանց համախմբությունը, այլ նաև այդ մրցակցային առավելությունը ստեղծելու և երկարաժամկետ հատվածում դրա կայունությունը ապահովելու ունակությունը:

Հիմնաբաներ. Ազգային տնտեսություն, մրցունակություն, մրցակցային առավելություններ, արդյունավետություն

Ներածություն

Պետության սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական նպատակներից մեկը բնակչության կյանքի որակի բարձր մակարդակի ապահովումն ու դրա շարունակական բարելավումն է: Սույն նպատակի իրագործումը մեծապես կախված է տնտեսությունում աշխատանքի արտադրողականության մակարդակից, քանի որ վերջինս, ըստ էության, աշխատանքի կամ կապիտալի յուրաքանչյուր ծախսված միավորի դիմաց ստացված արդյունքն է, որը կախված է ոչ միայն արտադրանքի որակից ու հատկանիշներից, այլ նաև արտադրական գործընթացների արդյունավետությունից: Նշված դատողությունը տեղավորվում է մրցակցային առավելությունների պորտերյան տեսության շրջանակներում, ըստ որի՝ կոնկրետ երկրում բնակչության բարեկեցությունը կախված է բարձր արտադրողականության հասնելու և այն շարունակաբար ավելացնելու՝ տեղական ընկերությունների ունակությունից: Ակնհայտ է, որ հնարավոր չէ մրցունակ լինել արտադրության բոլոր ոլորտներում, քանի որ պետության սոցիալ-տնտեսական զարգացման և ազգային տնտեսության մրցունակության բարձրացման քաղաքականության հիմնարար խնդիրը պետք է հանդիսանա հասարակական կենսագործունեության ոլորտների ու արտադրությունների միջև սահմանափակ ռեսուրսների բաշխման այնպիսի մոդելի ընտրությունը, որը հնարավորություն կընձեռի դրանք օգտագործել առավելագույն արդյունավետությամբ, մշտապես կատարելագործել արտադրական գործընթացները, բարելավել արտադրողականության աճին նպաստող գործոնները՝ արտադրանքի որակը, մարքեթինգային և այլ գործառնությունները:

Մեթոդաբանություն

Մեր ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը կազմում են ազգային մրցակցային առավելությունների բացահայտման չափորոշիչները, ինչպես նաև Մ.Պորտերի ազգային մրցակցային առավելությունների տեսության հիմնարար սկզբունքները: Ըստ այդմ, մեթոդաբանական առումով, Հայաստանի տնտեսության միջազգային մրցունակության առանցքային կառուցվածքային բաղադրիչներից առավել կարևորում ենք մրցակցային առավելությունների հետևյալ հենքային ուղղությունները.

- գործոնային պայմանները, որոնք ներառում են ինչպես արտադրության ավանդական գործոնները (բնական և աշխատանքային ռեսուրսներ), այնպես էլ այսպես կոչված "նոր" գործոնները, որոնցից են՝ նոր տեխնոլոգիաների ներդրումը, գիտատեխնիկական հենքը, բարձր որակավորված աշխատուժը և այլն: Ավելորդ չէ նկատել, որ գործոնների նշված խմբերի միջև օպտիմալ համամասնության ապահովումը երկրի մրցակցային առավելությունների կայուն զարգացման կարևոր նախապայման է հանդիսանում:

Այսպես, մրցունակության համակարգում ավանդական գործոնների դերի ուռճացումը և նոր գործոնների թերօգտագործումը երկարաժամկետ հատվածում կարող է հանգեցնել մրցակցային առավելությունների խաթարմանը, ազգային տնտեսության

մրցունակության ձևախեղմանը, ինչի օրինակելի դրսևորումներից է արտահանման կառուցվածքում հանքահումքային ռեսուրսների մասնաբաժնի գերակշռությամբ աչքի ընկնող տնտեսությունների (որոնց թվում է նաև՝ ՀՀ տնտեսությունը) արտաքին մրցակցային դիրքի խոցելիությունն ու անկայունությունը, որն առավել ցայտուն կերպով ի հայտ է գալիս համաշխարհային տնտեսական համակարգի ճգնաժամային ցնցումների ժամանակ,

- ներքին պահանջարկի գործոնները, ըստ որի՝ միջազգային փորձը վկայում է, որ երկրի տնտեսությունն առավել մրցունակ է այն ոլորտներում, որտեղ ապրանքների և ծառայությունների նկատմամբ ներկայացվող պահանջարկն արտադրողներին հստակ պատկերացում է տալիս սպառողների պահանջումների ձևավորման մասին, ինչը խթանում է անընդհատ իրականացնել արտադրական գործընթացների ու ապրանքների և ծառայությունների բարելավումներ, ներդնել նորարարություններ, և հետևաբար, ստեղծել ավելի կայուն ու կենսունակ մրցակցային առավելություններ,

- արտադրության սպասարկող ճյուղերի վիճակն ու զարգացման մակարդակը: Արտաքին շուկաներում մրցունակություն ունեցող սպասարկող ճյուղերը առավելություններ են ստեղծում նաև իրենց հետևող ճյուղերի և ընկերությունների համար: Ընդ որում, այստեղ առկա է հստակորեն արտահայտվող ուղիղ կապ, այսինքն՝ որքան բարձր է միջազգային մակարդակում սպասարկող ճյուղերի մրցունակությունը, այնքան ավելի շատ առավելություններ են ստանում դրանց հետ կապված ազգային ընկերությունները և ճյուղերը,

- կազմակերպական կառուցվածքը, ըստ որի՝ համաշխարհային տնտեսական հարաբերություններում ակտիվ և արդյունավետ ընդգրկման առումով կարևոր նշանակություն ունեն ճիշտ ընտրված շուկայական ռազմավարությունն ու համարժեք կազմակերպական կառուցվածքը: Արդի տնտեսական հարաբերությունները աչքի են ընկնում ճկունության ու փոփոխականության բարձր աստիճանով, և դրանց հարմարեցումը, միջազգային շուկայական հարթակներում ազգային ընկերությունների ակտիվ դիրքավորումը պահանջում են արտադրողականության, կառավարման արդյունավետության, արտադրանքի և սպասարկման որակի անընդհատ բարձրացում: Մրցակցային առավելությունների պորտերյան տեսության կարևորագույն հիմնադրույթներից է նաև տնտեսության արտաքին մրցունակության և ներքին մրցակցության սերտ փոխկապվածությունը: Ավելին, հենց ուժեղ ներքին մրցակցությունն է ազգային ընկերություններին ստիպում անընդհատ բարձրացնել գործունեության արդյունավետությունն ու եկամտաբերությունը, ներդնել նորարարություններ և դուրս գալ միջազգային շուկաներ: Ներքին մրցակցային միջավայրում կոշտ պայքարում թրծվելով, ընկերություններն արտաքին շուկայական հարթակներում հաջողության հասնելու հմտություններ և ունակություններ են ձեռք բերում: Պորտերի մոտեցմամբ, եթե արտասահմանյան ընկերությունների հետ մրցակցությունն ինչ-որ իմաստով պայմանական և հեռավար լինելու միտում ունի, ապա ներքին մրցակցությունը դուրս է

գալիս զուտ տնտեսական “մրցման” շրջանակներից և դառնում բավականին արդյունավետ: Երկրի ներսում գտնվելով, մրցակիցները սկսում են պայքարել ինչպես շուկայի բաժանման, այնպես էլ տեխնիկական ու տեխնոլոգիական արդյունավետության և այդ կերպ առավելության հասնելու համար [Porter, The Microeconomic Foundations, 86]: Ի հավելումն նկարագրված հիմնական գործոնների, տնտեսության մրցունակությունը պայմանավորված է նաև երկու էական բաղադրիչներով՝

- պատահական գործոնների ազդեցությամբ ազգային տնտեսության մրցունակության մակարդակի փոփոխությունը (քաղաքական անկայունությունից բխող իրավիճակներ, ռեսուրսների գների կտրուկ փոփոխություններ և այլն),

- պետության գործողություններով պայմանավորված մրցունակության որոշիչների փոփոխությունը: Օրինակ, պետությունը կարող է նպաստել մրցունակության գործոնային պայմանների ուժեղացմանը, պահանջարկի մեծության ու կառուցվածքի փոփոխությանը, մրցակցային միջավայրի բարելավմանը և այլն:

Գրականության ակնարկ

Թեև մրցակցային առավելությունների ժամանակակից տեսություններում առավել տարածված է Մ. Պորտերի տեսությունը, իսկ գործնական առումով առավել կիրառական են Դավոսի Համաշխարհային ֆորումի ամենամյա զեկույցները [Global Competitiveness Reports], գիտական տեսանկյունից բազմաթիվ են այն մշակումները, որոնք օգնում են գտնել ազգային մրցակցային առավելությունների բացահայտման և դրանց իրացման խնդիրների արդյունավետ լուծումներ: Այսպես օրինակ, որոշ փորձագետներ կենտրոնանում են մրցունակության տարբեր հարթությունների բացահայտման վրա [Grauwe], [Levine & Renelt], մյուսներն առավել հետաքրքրված են ուսումնասիրելու տնտեսական զարգացման գործում մրցունակության իրացման աշխարհագրական առանձնահատկությունները [Gallup et al]: Մեր ուսումնասիրության համար պակաս կարևոր չէ հաշվի առնել Հաուսմանի, Ռոդրիքի և Վելասկոյի տեսագործնական բնույթի վերլուծությունները, որոնք առնչվում են տնտեսական աճի հարցում մրցունակության դերի և վերջինիս խոչընդոտող խնդիրների ախտորոշմանը [Hausmann et al], ինչպես նաև նույն խնդիրներն արծարծող՝ Ռ. Բալդվինի, Պ. Կրուգմանի և այլոց աշխատությունները [Baldwin]: Հաշվի առնելով մասնագիտական գրականության կարևորագույն ձեռքբերումները, մեր նպատակն, այնուամենայնիվ, մրցակցային առավելությունների բացահայտման և իրացման ազգային առանձնահատկություններն են և դրանց հիմնավորման մեթոդաբանական խնդիրները:

Վերլուծություն

Ազգային տնտեսության մրցունակության՝ ներկայումս գոյություն ունեցող մոդելային կառուցվածքներում նկատելի են բարձր կամ ցածր եկամուտ ունեցող երկրների առանձնահատկությունները [Смит]: Այսպես, համաշխարհային տնտեսական

համակարգում նշանակալի թիվ են կազմում այն տնտեսությունները, որոնց մրցակցային առավելությունները ձեռք են բերվել, առաջին հերթին, արտադրության գործոնների ցածր արժեքի և ազգային արժույթի արժենվազման հաշվին: Այսինքն, այս պարագայում տնտեսության մրցակցային առավելությունների հիմքում բնակչության համեմատաբար ցածր կենսամակարդակն է, ինչը պայմանականորեն կարելի է համարել աղքատ երկրների մրցունակության մոդել: Այնուհանդերձ, գիտատեխնիկական առաջընթացի արդյունքում ռեսուրսային առավելությունների դերը վերջին տարիներին էականորեն նվազել է: Ռեսուրսների տիրապետումն այլևս մրցակցային առավելությունների ձեռքբերման անբավարար պայման է հանդիսանում: Արդի աշխարհատնտեսական համակարգը գտնվում է անընդհատ նորացման, կատարելագործման, կառուցվածքային կերպափոխությունների և ներքին կապերի լավարկման շարունակական գործընթացում, որի հիմնարար նպատակը ռեսուրսների օգտագործման արդյունավետության բարձրացումն է, քանզի միայն այդ կերպ է հնարավոր սահմանափակ ռեսուրսների պայմաններում ապահովել արտադրողականության աճ՝ բնակչության կենսամակարդակի բարձրացման անընդհատություն ապահովելու համար: Այս համատեքստում վճռական դերակատարում է ստանում տնտեսության տարբեր մակարդակներում և հատվածներում իրականացվող նորամուծական (ինովացիոն) գործընթացը, որի արդյունքում տեղի է ունենում գիտատեխնիկական ներուժի կատարելագործում, տեխնոլոգիական մրցակցային առավելությունների ձևավորում և զարգացում, ինչը, ի հակադրություն աղքատ երկրների, հանդիսանում է հարուստ երկրների մրցունակության մոդելի առանցքային բնութագրիչը: Հետևաբար, կարևորվում է մրցունակությունը պայմանավորող գործոնների (կազմակերպական-կառավարչական, տնտեսական, արտադրական, մարքեթինգային և այլն) արդյունավետ համակցման կարողությունը: Բոլոր այս գործոնները կազմում են կազմակերպության, ճյուղի կամ երկրի տնտեսության մրցակցային առավելությունների համախմբությունը, իսկ դրանց համակցման կոնկրետ եղանակը կամ տարբերակը կարող է իր հերթին դառնալ մեկ այլ՝ կայուն մրցակցային առավելություն [Porter, The Microeconomic Foundations, 86]: Մրցակցային առավելությունների համակարգի կարևոր տարր են հանդիսանում տարածաշրջանային (ռեգիոնալ) մակարդակի մրցակցային առավելությունները [Dimian & Danciu, 67-78], որոնց առավել ամբողջական հետազոտություններից է Մ.Պորտերի արդյունաբերական կլաստերի տեսությունը: Այն հետազայում զարգացվեց մեկ այլ ամերիկացի գիտնականի՝ Մ. Էնրայթի կողմից, որի հետազոտությունների արդյունքներն ամփոփվեցին տարածաշրջանային կլաստերների տեսությունում: Էնրայթի հետազոտությունների օբյեկտ էին հանդիսանում երկրի ներսում մրցունակության տարածաշրջանային տարբերությունները և մրցակցային առավելության աշխարհագրական մասշտաբը: Հետազոտությունների արդյունքում նրա կողմից արվում է հետևյալ պնդումը, ըստ որի՝ մրցակցային առավելությունները ստեղծվում են ոչ թե վերագային կամ ազգային մակարդակներում, այլ

տարածաշրջանային մակարդակում, որտեղ առանցքային դերակատարում ունեն տարածաշրջանների զարգացման պատմական նախադրյալները, գործարարության վարման և արտադրության կազմակերպման մշակույթի տարբերություններն ու կրթության ստացումը [Enright, 24-25]: Տարածաշրջանային կլաստերների կազմավորումը և զարգացումը մրցակցային առավելությունների խթանման կարևոր գործոն են հանդիսանում: Ուստի՝ այս համատեքստում կարևորվում է ՀՀ-ում տարածաշրջանային կլաստերների ձևավորման և զարգացման ուղղությամբ գործուն քայլերի իրականացումը, որոնք, մասնավորապես, կներառեն տարածաշրջանային կլաստերային ներուժի համակողմանի գնահատումը, կլաստերային նախաձեռնությունների խթանման նախադրյալների ստեղծումը և դրանց կենսագործման ինստիտուցիոնալ մեխանիզմների ձևավորումը, կառավարման համակարգի տարբեր մակարդակներում կլաստերային քաղաքականության իրականացման լիազորությունների ամրագրումն ու հստակ տարանջատումը և այլն: Հարկ է նկատել, որ պորտեյան տեսության շրջանակներում առաջարկված մրցունակության որոշիչների նկարագրված համակարգից բացի, ներկայումս ազգային տնտեսության մրցակցային առավելությունների հետազոտություններում կիրառվում են այլ մոդելային կառուցվածքներ ևս: Այսպես, մեծ թվով արդի տնտեսագիտական հետազոտություններում առաջարկվում են ազգային տնտեսության մրցակցային առավելությունների հետևյալ որոշիչները՝ ինստիտուտներ, ենթակառուցվածքներ, մակրոտնտեսություն, առողջապահություն, տարրական և բարձրագույն կրթություն, ապրանքային շուկաների արդյունավետություն, աշխատանքի շուկայի արդյունավետություն, ֆինանսական շուկայի զարգացում, տեխնոլոգիական պատրաստվածություն, շուկայի չափեր, գործարար կապերի զարգացվածություն, տեխնոլոգիական նորարարություն: Գործոնային այս հավաքածուն, մասնավորապես, հիմք է հանդիսանում Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից ազգային տնտեսությունների մրցունակության մակարդակի գնահատման համար: Մրանք, ըստ էության, տնտեսության մրցակցային առավելությունների ձևավորման և խթանման ազգային ռազմավարության առանցքային ուղղություններն են: Ինչպես հայտնի է, Մ. Պորտերի մոդելում երկրի մրցունակությունը պայմանավորվում է ռեսուրսներով, տեղական պահանջարկով, հարակից ճյուղերով, ինչպես նաև ձեռնարկության ռազմավարությամբ, կառուցվածքով և մրցակցությամբ [Porter, National competitive advantages, 35-48]: Հայաստանի մրցակցային առավելությունների բացահայտման համար, մրցակցային առավելությունների բացահայտման մեթոդաբանության մշակման համար անհրաժեշտ է՝

- բնական ռեսուրսների բացահայտում, թվայնացում,
- այդ ռեսուրսների առավելագույն արդյունավետությամբ օգտագործման հնարավորությունների գնահատում,
- Հայաստանի հեղինակային արտադրանքների, ծառայությունների ստեղծում, փաթեթավորում,

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

- նորարարությունների, գիտական բացահայտումների, հայտնագործությունների իրականացման միջոցով թողարկվող բարիքների աշխարհում բացարձակ մրցակցային դիրքերի գրավում,

- աշխարհում արդեն առկա բարիքների արտադրության ավելի մրցակցային պայմանների ստեղծում նախորդ պարագրաֆում ներկայացված եղանակների կիրառմամբ,- մրցակիցներ երկրների թույլ կողմերի վրա կենտրոնացում, հաշվարկում,- Հայաստանի հանրապետության թույլ և ուժեղ կողմերի վերլուծություն: Եթե աշխարհում արտադրվում է մի բարիք, նույն բարիքից արտադրելու դեպքում պետք է խուսափել միայն ցածր գնի վրա կենտրոնանալուց: Անհրաժեշտ է գործել գին-որակ-քանակ-արագություն կոնցեպտով: Հակառակ պարագայում միայն գներով մրցակցության դեպքում ամբողջ արտադրությունը կհանգի վնասաբերության և իրերից մի օր սնանկության: Անհրաժեշտ է նույնիսկ աշխարհում արտադրվող արդեն առկա բարիքների արտադրության դեպքում ունենալ հեղինակային առավելություն, որպիսի պարագայում Հայաստանի հետ որևէ մի այլ երկիր չի կարող մրցակցել: Օրինակ Չինաստանում կա կարգապահ, բարձր արտադրողականությամբ օժտված, տնտեսության կառուցվածքային փոփոխություններին արագ արձագանքող աշխատուժ, ինչը հնարավորություն ընձեռեց Չինաստանին դառնալ աշխարհի "ֆաբրիկան" և ներդրումները ներգրավել Չինաստան: Այնուհետև արագ յուրացրեց տեխնոլոգիաները ու նոր մարտահրավեր նետեց աշխարհին՝ հանդես գալով սեփական բրենդներով, արտադրանքով: Իսկ այժմ, երբ հսկայական արտադրական կորպորացիաներ փորձում են տեղափոխել իրենց տեղակայումները, որևէ այլ երկիր պատրաստ չէ ընդունելու այդ ծավալները որակյալ, կարգապահ ու ունակ աշխատուժի բացակայության պատճառով: Հաշվի առնելով տեսագործնական բնույթի մեր դիտարկումները, ինչպես նաև Հայաստանի տնտեսության ներկայիս առանձնահատկությունները, կարծում ենք Հայաստանի հանրապետությունում անհրաժեշտ է կենտրոնանալ ներմուծմանը փոխարինող տեղական արտադրության զարգացման և արտահանմանը միտված արտադրությունների խթանման վրա: Հաշվի առնելով նաև Հայաստանի անբարենպաստ աշխարհագրական դիրքը՝ համաաշխարհային օվկիանոսին ելքի բացակայությունը, հիմնական սպառող երկրներից՝ ԱՄՆ, Արևմտյան Եվրոպա և այլն հեռավորությունը, ճանապարհածախսի շարունակական թանկացումները, պատերազմական տուրքուլենտությունը, կարծում ենք անհրաժեշտ է կենտրոնանալ գյուղատնտեսական արտադրանքի ինքնաբավության հասնելու, ռազմարդյունաբերության, թեթև և փոքր ծավալի արտադրանքների թողարկման, ծառայությունների արտահանման, զբոսաշրջության զարգացման վրա, ինչի համար կարծում ենք Հայաստանը ունի բավականին ներուժ:

Ինչ վերաբերվում է Հայաստանի Հանրապետությունում ազգային մրցակցային առավելությունների իրացման խոչընդոտներին, ապա դրանցից կարևորագույնը թերևս դեպի ծով անմիջական ելք չունենալու խնդիրն է: Նման «ցամաքային» երկրի համար

տեղական ապրանքների և ծառայությունների արտահանման համար Բաթում կամ Փոթի նավահանգիստներ հասնելն արդեն նշանակալի տնտեսական ու քաղաքական անբարենպաստ պայման է: Հայաստանն այսօր փորձում է ձևավորել «խաղաղության խաչմերուկ», որը միտված է նաև տարանցիկ ճանապարհներից ձևավորված որոշակի կախվածությունը թուլացնելուն, կրճատելու դրանց պատճառով առաջացող գործառնական ծախսերը: Այս ծրագրի իրագործման դեպքում կարող է աստիճանաբար ավելանալ նաև արտաքին շուկաներում մեր երկրի մրցունակությունը, ինչպես նաև գրավիչ դարձնել արտաքին ներդրումները: Վերը նշվածի վառ օրինակ է Հայաստանի Հանրապետությունը, որը չունենալով ծովեզերք և երկար տարիներ շրջափակված լինելով երկու հարևան պետությունների կողմից, ներմուծում և արտահանում իրականացնելիս հանդիպում է մի շարք խոչընդոտների: Մյուս կողմից էլ, չնայած նրան, որ ՀՀ և հարևան երկրների՝ Իրանի Իսլամական Հանրապետության և Վրաստանի Հանրապետության հետ հարաբերությունները գտնվում են բարձր դիվանագիտական մակարդակի վրա, այդուհանդերձ վերջիններս էլ ունենալով սեփական քաղաքական ոչ բարենպաստ խնդիրներ, երբեմն խոչընդոտ են հանդիսանում ՀՀ տնտեսության զարգացման հարցում:

Այսպիսով, կարևոր է գնահատել և դեպի ծով ելք չունեցող, «ցամաքային» երկրների կողմից ներքին և արտաքին շուկաներում ներկայացվող ապրանքների և ծառայությունների մրցունակության անբավարար մակարդակի պատճառները: Բացի այդ, կարևոր է հստակ չափորոշիչներով ընտրել երկրի բացարձակ և հարաբերական առավելությունները, որոնք ավելի իրատեսական կդարձնեն Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցունակության իրացումը: Ներկայումս փորձագետների կողմից ձևավորվել է դեպի ծով ելք չունեցող՝ «ցամաքային» երկրների մրցունակությանն առնչվող տեղեկատվական շտեմարան, ինչը թույլ է տալիս վեր հանել վերջիններիս համար կարևոր տնտեսական, մասնավորապես, մրցունակությանն առնչվող առանձնահատուկ հիմնահարցերը, ինչն, իր հերթին, հնարավորություն կընձեռի հստակեցնելու երկրների ռազմավարական զարգացման հիմնական ուղղությունները:

Այս ամենի հիման վրա կարելի է դատողություններ անել նաև երկրի ՀՆԱ-ի կառուցվածքի արդյունավետության, արտահանման կարողության, ինչպես նաև արտաքին շուկաներում տեղական ընկերությունների ապրանքների և ծառայությունների իրացման արգելքների, դրանց աստիճանական կրճատման և Հայաստանի Հանրապետությունում ներմուծման փոխարինման և արտահանման խթանման քաղաքականության հիմնադրույթների մշակման և հետևողական իրականացման վերաբերյալ:

Եզրակացություն

Ըստ վերը նշվածի կարելի է եզրակացնել, որ ազգային մրցակցային առավելությունների առաջնային բաղադրիչը դա մարդկայինն է, որից հետո միայն,

համապատասխանաբար, հանքահումքային-արդյունաբերական և ֆինանսական ռեսուրսները: Վերջին տարիներին ՀՀ-ից բնակչության մեծ արտահոսք է տեղի ունենում: Այն հատկապես ընդգրկում է երիտասարդության՝ հատկապես աշխատունակ մարդկանց շրջանակները, ինչն էլ հանգեցնում է բնակչության ծերացման: Սակայն, կցանկանայի նշել, որ մեծ թափով զարգացում են ապրում գյուղատնտեսության և էներգետիկայի ոլորտները: Գյուղատնտեսության ոլորտում հատկապես մեծ զարգացում է ապրել ջերմոցաշինությունը: Հաշվի առնելով 2014թ. ՀՀ-ի Եվրասիական տնտեսական միությանն անդամակցելը և դրա շուկայի հնարավորություններն ու առավելությունները, ՀՀ տնտեսվարողներն ու ներդրողները հանձն առան ջերմոցաշինության համատարած ընդլայնման՝ հույս ունենալով արտադրած գյուղմթերքը սպառել 170մլն. բնակչություն ունեցող Եվրասիական շուկայում: Իսկ էներգետիկայի ոլորտում, վերջին տարին տպավորիչ զարգացում է ապրում արևային էներգիայի արտադրությունը: Արդեն 2 տարի է ինչ մի քանի արտասահմանյան ընկերություններ իրենց պատրաստակամությունն են հայտնել ՀՀ-ում արևային էներգետիկայի ոլորտում ներդրում կատարելու մասին: Այսպիսով, ՀՀ կառավարությունը նպատակ ունի հասնել նրան, որ կապույտ վառելիքի ներմուծման ծավալները հասցնի նվազագույնի:

Վերջում հարկ է նշել, որ տեղի արտադրողները պետք է լայն ուսումնասիրություն կատարեն և պարզեն հարևան երկրների, ԵՄ և ԵԱՏՄ անդամ-պետությունների տնտեսական արտադրողականության հնարավորությունները, որպեսզի կարողանան առաջարկել շուկայի համար տվյալ ժամանակշրջանում պահանջարկ ունեցող արտադրություն: Վերը նշվածները հաշվի առնելով, ազգային տնտեսության մրցունակության բարձրացման հիմնարար խնդրի հանգուցալուծումն իրականում ինստիտուցիոնալ այնպիսի միջավայրի ձևավորումն է, որը թույլ կտա մրցակցային առավելությունների խթանում ընկերությունների, ճյուղերի և ազգային տնտեսության մակարդակում՝ գործունեության առավելագույն հնարավոր արդյունավետության և արտադրողականության շարունակական աճի ապահովմամբ՝ ի հաշիվ, մասնավորապես, տեխնոլոգիական ու այլ բնույթի նորարարությունների ներդրման, ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման, ենթակառուցվածքի կատարելագործման և այլն:

Գրականության ցանկ

1. R. Baldwin. Openness and Growth: What's the Empirical Relationship. NBER Working Paper No. 9578 (2003).
2. P. De Grauwe. Introduction, in P. De Grauwe (ed.), Dimensions of Competitiveness, CESifo Seminar Series, Cambridge: MIT Press, ix-xvi. (2010)

3. Gina Cristina Dimian and Aniela Danciu, National and Regional Competitiveness in the Crisis Context. Successful Examples, Additional contact information, Theoretical and Applied Economics, 2011, vol. XVIII(2011), issue 11(564), 67-78.
4. Enright M.J. Why clusters and the way to in the Game, Word Link, 1992, N5, p. 24-25
5. J.L. Gallup, J.D. Sachs & A.D. Mellinger.. “Geography and Economic Development,” NBER Working Paper, No. 6849, Cambridge, MA: National Bureau of Economic Research (2008).
6. R. Hausmann, D. Rodrik & A. Velasco. Growth Diagnostics. Working Paper, Boston: Harvard University – Kennedy School of Government. (2005).
7. R. Levine & D. Renelt. American Economic Review 82 (4), 942-961992 (2018).
8. Porter M., National competitive advantages, New York, Free press, 1990, pp.35-48.
9. Porter M., The Microeconomic Foundations of Prosperity: Findings from the Business Competitiveness Index. with C. Ketels and M. Delgado, in World Economic Forum (ed.), Global Competitiveness Report 2006-2007, Geneva: World Economic Forum (2006).
10. А. Смит – Исследование о природе и причинах богатства народа, 1776г.
11. Global Competitiveness Reports, Geneva: World Economic Forum (2006 - 2023), www.weforum.org (10 October, 2024)

METHODOLOGICAL ISSUES OF IDENTIFYING THE COMPETITIVE ADVANTAGES OF THE ARMENIAN ECONOMY

Nairi Sargsian

PhD in Law, Doctorate

NAS RA, Institute of Economy

nsargsyan@auditors.am

Abstract

In a dynamically developing world, the state has an extremely important role to play in promoting competitive advantage. Moreover, the state cannot and should not try to create competitive sectors of the economy, because only companies can and should do that. The state should encourage companies, in some situations, even compel them to expand their aspirations, scope of interests and transition to higher levels of competitiveness, even if this process is unpleasant and difficult. Therefore, the state should create an environment in which companies can create and develop competitive advantages. An effective state strategy aimed at promoting the competitiveness of the national economy and developing the competitive advantages of companies should, in fact, be based on such simple principles as the promotion of changes, the protection and development of competition within the country, and the promotion of innovation. Competitive advantages can take different forms depending on the specifics of the industry,

product and market. The basis of a company's competitiveness is not only the competitive advantage taken separately or their combination, but also the ability to create that competitive advantage and ensure its sustainability in the long term.

Keywords: National economy, competitiveness, competitive advantages, efficiency.

Ներկայացվել է՝ 15.10.2024թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 11.11.2024թ.